

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կ. Կոստանեանց. Հայագիտութիւնն արեւմտեան Եւրոպայում: Համառոտ տեսութիւն ու գրացուցակ. Թիֆլիս. 1910:

Պարոն Կ. Կոստանեանը հայ բանասէրներէ շարքում ունի իւր որոշ պատուաւոր տեղը: Նորա գրչին են պատկանում մի շարք ուսումնասիրութիւններ և հրատարակութիւններ, որոնց մէջ անտարակոյս մեծ տեղ են բռնում միջնադարեան հայոց գրականութեանը նուիրած ուսումնասիրութիւնները, որոնցով նա երևան հանեց մեր գրականութեան այդ վերին աստիճանի հետաքրքիր և միևնոյն ժամանակ չափ անմշակ շրջանի յիշատակարաններէ մի մասը:

«Հայագիտութիւնն արեւմտեան Եւրոպայում» իւր նոր աշխատութեամբ պ. Կոստանեանը լրացրեց մեր բանասիրութեան մէջ վաղուց զգացուած պակասը: Աւելորդ է յիշել, թէ Բնշ դժուարութիւններէ է հանդիպում մի մասնագէտ, երբ իրեն հետաքրքրող նիւթի վերաբերեալ ձեռքի տակ որոշ ցուցմունքներ չունի: Հէնց այդ նպատակով տարիներ առաջ ուրիշները (Ջորջ Բանալեան, Շրումպֆ, Միանսարեան, Եղեան) փորձել էին այդ թերին լրացնել, բայց դեռ մենք չունէինք մի այնպիսի ամբողջացրած աշխատութիւն, ինչպիսին է այժմ պ. Կոստանեանի վերոյիշեալ գործը:

Պ. Կոստանեանի այս գիրքը բաղկացած է երկու մասից. ա) յառաջաբան Ա.—Հը, և բ) գրացուցակ 1—182 երես: Իւր յառաջաբանի սկզբում յարգոյ բանասէրը յայտնում է, որ նպատակ է դրել՝ Եւրոպայի գիտնականների այն աշխատութիւնների ցանկը տալու, որոնք իրենց դէպի հայութիւնն ունեցած հետաքրքրութիւնը ներկայացնելով հանդերձ «հանդիսանում են իբրև ճշմարիտ պատկեր հայկական անցեալ և արդի իրականութեան»: Եւրոպացիք առանձնապէս հետաքրքրուել են մեր լեզուով, գրականութեամբ, երկրով և պատմութիւնով: Հայագիտութիւնը Եւրոպայում զարգացման երկու շրջան է ունեցել. ա) ԺԹ—ԺԸ դարը և բ) ԺԹ-ից մինչև մեր օրերը: Իւր աշխատութեան ընդարձակ յառաջաբանում, որ պատմական ճիշտ փաստերի վերայ հիմնուած մի գեղեցիկ ուսումնասիրութիւն է, հեղինակը աշխատում է բացատրել այն դրդիչ պատճառները, որոնք Եւրոպայում յառաջ բերին մեծ հետաքրքրութիւն դէպի մեզ վերոյիշեալ երկու շրջանների ընթացքում:

Եւրոպական նոր ազգերի դէպի հայերն ունեցած հետաքրքրութեան մասին մենք տեղեկութիւններ ունենք Թ դարից: Եւրոպացիք աւելի մտերմացան հայերի հետ խաչակիրների արշաւանքների ժամանակ, երբ վերջիններին գինուորուած բանակներից հայերը Վիլիկայում սիրալիր ընդունելութիւն ցայց տուին: Հայերը զգուած լինելով Բիւզանդիայի խարդախ բազա-

քականութիւնից, զրկաբաց ընդունեցին այդ նոր քրիստոնեայ եղբայրներին, որոնք իւրզանդիայի զօրութեան առաջը կարող էին առնել: Այդ բարեկամական յարաբերութիւնները աւելի սերտացան, երբ Ռուսներէնները խնամիրական կապերով կապուեցին Եւրոպացիներին հետ: Այս փոխադարձ կապերը մեծ դարկ տուին արեւելքի և արևմուտքի վաճառականութեան և ստեղծեցին հայկական նոր գաղութներ: Եւրոպայի վաճառականներէց Ռուսներէններէց ստացած առևտրական արածոնագրերի շնորհիւ Կիլիկիայում մեծ դեր են կատարում ձենովացիք ու վենետիկցիք, որոնք և այս բարեկամութեան պատճառաւ հովանաւորում են ծովափնեայ հայ գաղութները, ինչպէս օրինակ Թէոդոսիան:

Այստեղ թող ներուի մեզ նկատել, որ ձենովացոց հովանաւորութեան տակ ծաղկած Թէոդոսիայի հայ փարթաւ դաղթականութիւնից Վի միայն կիսակործան եկեղեցիներն չեն մնացել, այլ և մի շարք կանգուն յիշատակարաններ և բաւական հարուստ գրականութիւն:

Արեւելքի և արևմուտքի փոխադարձ յարաբերութեան հետեւանքը լինում է այն, որ մեր երկիրը զբաւում է Եւրոպացի ճանապարհորդների ուշադրութիւնը, որոնք ԺԳ դարից սկսած այցելում են մեզ և ի թիւս արեւելեան միւս ազգերի՝ նկարագրում Հայաստանն ու հայի կենցաղը:

Հայաստանը Եւրոպային ծանօթացնելու գործում պակաս դեր չեն կատարել զանազան կաթոլիկ վանական կարգեր (գոմիւնիկան, Փրանչիսկեան, եզուիտ), որոնք զանազան ժամանակ քարոզչական նպատակով այցելել են Հայաստան: Այստեղ պ. Կոստանեանը իրաւացի կերպով կանգ է առնում հայ ունիթոսների գործունէութեան վերայ, ու յիշում նոցա աչքի ընկնող գրաւոր վաստակները:

Մինչև ԺԹ դարը հայագիտութիւնը Եւրոպայում ունեցել է քաղաքական, կրօնական, տնտեսական և այլ շարժառիթների ԺԹ դարում հայագիտութիւնը Եւրոպայում մտնում է մի նոր շրջանի մէջ: Այդ ժամանակից վերոյիշեալ շարժառիթների վերայ աւելանում է նաև գիտականը: ԺԹ դարու հայագէտներն առանձնապէս զբաղուել են հայոց լեզուի ծագումով և գրական խնդիրներով:

Գրքի երկրորդ մասը մի գրացուցակ է, այստեղ յիշուած են Եւրոպայի հայագէտների անուններն իրենց աշխատութիւնների վերնագիրների հետ: Այս ցուցակից օգտուելը զիւրացնելու համար պ. Կոստանեանը սորան կցել է հեղինակների ժամանակագրական, այրբենական և ԺԹ դարու հեղինակների ցանկը նոցա երկերի նիւթի համեմատ:

Ի սրտէ ողջունելով այս վերին աստիճանի կարևոր գրքի հրատարակութիւնը՝ յայտնում ենք մեր շնորհակալութիւնը պ. Կոստանեանին՝ իւր այդ գեղեցիկ ձեռնարկութեան համար, որը այս վերջին տարիները հայոց լեզուով լոյս տեսած բանասիրական գրականութեան մէջ բռնելու է իւր պատուաւոր տեղը:

ՍՄԲԱՏ ՏԵՐ-ԱՌԵՏՐՈՅԱՆ